ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 5, 1957 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ռ. ՉԱՐՅԱՆ «ՍԻՐԱՆՈՒՅՇ»

«...Ի՞նչ է բեմի արտիստը, լինի նա դրամատիկական դերասան, երգիչ թե նվագիչ, եթե ոչ միօրյա ծաղիկ, որ առավոտը բացվելով, երեկոյան թառամում է արեգակի վերջին ճառագայթների հետ։ Ադամյանը գերմարդկային ճիգ էր գործ դնում, որպեսզի կարողանա գրչով կամ վրձինով մի բան ստեղծել։ Եվ երբ ես հարցնում էի նրան.

—Ի՞նչ կարիք ունիս նկարչի անուն վաստակելու, քանի որ, իբրև բեմական արտիստ անգուգական ես։

Նա պատասխանում էր դառն թախիծով.

—Ո՞վ կարող է իմ մասին պատմել ապագա սերնդին, եթե ոչ ծերունիների թառամած հիշողությունը։ Ես փափագում եմ ունենալ մի վկայագիր ապագայի համար,-- ավելացնում էր նա, ձեռով զարկելով իր ձեռագիր վիպակների և ոտանավորների տետրին կամ յուր նկարներին, որոնք սակայն միջակությունից բարձր չէին»[1]*։*

Հայ վիպասանի այս տողերը ցույց են տալիս, թե որքան յուրօրինակ է դերասանի ստեղծագործությունը։ Դերասանի արվեստը, եթե կարելի է այսպես ասել, անցողիկ ճակատագիր ունի։ Այս տեսակետից բեմի անցյալի վարպետների ստեղծագործական դիմանկարի վերակենդանացումը պահանջում է մասնագիտական մեծ հմտություն։ Ահա այդ հատկանիշի դրսևորումը Ռ. Չարյանի «Սիրանույշ» մենագրության մեջ դարձնում է այն մեծ արտիստուհու հարազատ նկարագիրը։

Ռ. Չարյանը չի տեսել Սիրանույշի խաղը բեմում։ Իր ուսումնասիրությունները հեղինակը կատարել է հենվելով «պարբերական մամուլի էջերում պահպանված ռեցենզիաների, նամակագրության, մեմուարային գրականության, դերասանուհու խաղընկերների ու հանդիսատեսների հետ ունեցած զրույցների հիման վրա»[2]*։*

Ռ. Չարյանը ստեղծել է հայ բեմի անգուգական դերասանուհու բեմական գործունեության ամբողջ ընթացքը պատկերող մի գործ։ Հեղինակը Սիրանույշի խաղի մասին տարբեր ռեցենզիաներում ցրված դիտողությունների, երբեմն, բառիս բուն նշանակությամբ, պատառիկների հիման վրա երևակայության և տրամաբանության ուժով վերականգնում է մեծ դերասանուհու այս կամ այն դերակատարումը և Ռ. Չարյանը այդ կատարում է այնքան հաջող, որ Սիրանույշին տեսնողները հաստատում են մենագրության հեղինակի ճշմարտացի լինելը (տե՛ս պրոֆ. Լ. Քալանթար, «Առաջաբանի փոխարեն»)։

Հաճախ Ռ. Չարյանը Սիրանույշի խաղը մեկնաբանում և նկարագրում է այնքան պատկերավոր, որ մեծ դերասանուհու ստեղծած տվյալ կերպարն ընթերցողի առաջ կանգնում է իր ամբողջ մոնումենտալությամբ։ Այս առումով բնորոշ է Սիրանույշի ստեղծագործության գագաթնակետի՝ Մեդեայի նկարագրությունը։ Ոչ մի դերակատարում Սիրանույշին չի բերել այնպիսի հռչակ, ինչպես Մեդեան, որին մարմնավորելու համար դերասանուհին պետք է ողբերգական լայն շունչ ունենա։ Կրքերի ահագնությամբ, իր կենցաղի արժանապատվության համար մաքառող, ոտնակոխ արված պատվի համար դաժանորեն վրեժխնդիր լինող Մեդեայի դերում հանդես գալը դերասանուհուց պահանջում է ուժերի մաքսիմում լարում, դերասանական արվեստի բարձր տվյալներ։ Պատահական չէ այն հանգամանքը, որ հայ դերասանուհիներից շատ քչերն են հանդես եկել այդ դերում, չնայած հայ բեմը քիչ տաղանդավոր դերասանուհիներ չի ունեցել։ Եվ դա հասկանալի է, որովհետև «Մեդեան,— գրում է Ռ. Չարյանը, —բարդ-հակասական կերպար է, հոգեկան փոթորկումներով լի, և պահանջում է ոչ միայն անհատականության բազմակողմանիություն, այլև մեծ թափ, հուժկու խառնվածք։ Այդ դերի կատարումը ժամանակակիցները համարել

* Ռ. Չարյան, *Սիրանույշ*, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, էջ 346։

[1] Շիրվանզադե, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 9, էջ 276—277։

[2] Ռ. Չարյան, *Սիրանույշ*, 1956, էջ 13։

են պարզապես «մարդկային ուժերից վեր»։ Եվ այդ «ուժերը» ունեցել է Սիրանույշը ու Մեղեա խաղալով անէացրել, հափշտակել և արվեստի կատարելիությամբ գարմանք պատճառել հանդիսատեսին։

Մենագրության հեղինակը փորձել է պարզել Սիրանույշի արվեստի ընդհանուր նկարագիրը, բացահայտել նրա ստեղծագործության ոճը։ Այդ բանին հասնելու համար Ռ. Զարյանը վերլուծել է Սիրանույշի ստեղծագործած գրեթե բոլոր կերպարները և հանգել այն ճիշտ եզրակացության, որ այդ կերպարները միմյանց հետ ունեն ներքին կապ և պայմանավորում են մեկը մյուսին։ Հետազոտելով այն դերերի ցանկը, որոնք Սիրանույշը խաղացել է սկսած 1891 և հատկապես 1897 թ. հետո և առաջացրել ընդհանուր հիացում, Ռ. Զարյանը գտնում է. որ Սիրանույշի հաջողությունները այդ շրջանում ոչ միայն տաղանդի զարգացման ու ամրապնդման արդյունք են, այլև ստեղծագործական անհատականություն ձեռք բերելու, ինքնորոշման արդյունք. դերասանուհին գտնում է իր թեման՝ անհատի ազատությունը, որ մարմնավորել է կնոջ իրավազուրկ վիճակի պատկերումով։ Այստեղից հետևում է, որ Սիրանույշի արվեստի ծաղկումը նաև ժամանակի հասարակական-քաղաքական խմորումների արդյունք է։ «Մենք բնավ էլ պատահական չենք համարում,— գրում է Ռ. Զարյանը, —որ Սիրանույշի գործունեության ամենածաղկուն և ամենարժեքավոր շրջանը համընկնում է ռևոլյուցիոն վերելքին։ Ոչ միայն պատահական չէ, այլև կարելի է ասել, որ Սիրանույշի գործունեության մեջ այս շրջանում շատ բան պայմանավորված է ռևոլյուցիոն դարաշրջանով....

...Սիրանույշը չէր տեսնում ազատության ռեալ ճանապարհը, բայց ձգտում էր դրան իր ստեղծագործությամբ ազատության կոչ եր անում։ Նա չգիտեր, թե ինչպես պետք է պայքարել այդ ազատության համար, բայց ատելություն էր բորբոքում ճնշման ու բռնության դեմ, ընդդեմ ճահճացման, չնչինության, ստորաքարշության։ Նա մեծարում էր բանականությունը, խիղճը, մարդկայնությունը, հոգու թռիչքը, մտքի սլացումը։ Նա չգիտեր թե ե՛րբ և ի՛նչպես է գալու իր երազած ապագան, բայց իր ստեղծագործությամբ ժողովրդի մեջ վառ էր պահում հավատը, այն համոզումը, որ կգա մի օր, երբ մարդիկ իսկապես ազատ կլինեն»։

Անձի ազատության գաղափարը հանդիսատեսին հաղորդելու համար Սիրանույշը հաճախ ընտրել է թույլ, դեղարվեստական տեսակետից աննշան պիեսներ։ Եվ այս վերջին հանգամանքի վրա, ըստ երևույթին, Սիրանույշը այնքան էլ ուշադրություն չի դարձրել։ Դրամատուրգիական չնչին նյութն էլ Սիրանույշի խաղով կյանք է ստացել, հուզել է հանդիսատեսին։ Այս կապակցությամբ Ռ. Զարյանը առաջ է քաշել թույլ պիեսի լավ կատարման հարցը և Սիրանույշի օրինակով ճիշտ մեկնաբանել այն։ Սիրանույշի ռեպերտուարում բարձրարժեք, կլասիկ դրամատուրգիայի կողքին տեղ են գրավել շատ պիեսներ, որոնք այժմ հնագիտության սեփականությունն են դարձել։ Այս վերջիններում Սիրանույշի ընտրած դերերը նրա կատարմամբ վեր են ածվել արվեստի խոշոր ստեղծագործությունների։ Եվ դա զարմանալի չէ։ Եթե արվեստի մի մեծ կոթող, ասենք «Համլետը», ապաշնորհ դերասանի կատարմամբ կարող է աննշան մի գործ դառնալ, ապա ինչո՞ւ հանճարեղ ստեղծագործողի շնորհիվ մի որևէ մելոդրամա չի կարող հասնել ողբերգության աստիճանին։ Նման ստեղծագործողներ թատրոնի պատմությունը տվել է. հիշենք Մոչալովին, Շչեպկինին, Ֆեդոտովային, Երմոլովային։ Սիրանույշը եղել է Երմոլովայի նման արվեստագիտուհի և նրանց ռեպերտուարը չնչին բացառությամբ համընկել է։

Սիրանույշը, ժամանակին, որոշ քննադատների կողմից նմանեցվել է համաշխարհային հռչակ վայելող մի շարք դերասանուհիների։ Ռ. Զարյանը վիճարկելով նման կարծիքները փաստերի և ճիշտ եզրակացությունների հիման վրա ապացուցում է, որ հայ մեծ դերասանուհին և ոչ մեկի էպիգոնը չի եղել, այլ ունեցել է իր ստեղծագործական անհատականությունը և ոչ մեկին չի նմանվել։ Մենագրության հեղինակը Սառա Բեռնարհամլետի և Սիրանույշ-Համլետի զուգադրումով ապացուցում է, որ այստեղ միայն գոյություն ունի արտաքին նմանություն այնքանով, որքանով որ երկուսն էլ կին են, բայց նրանց մոտեցումը այդ կերպարին, նրանց մեկնաբանությունը խիստ տարբեր է եղել։

«Սիրանույշ» մենագրությամբ Ռ. Զարյանը հիմք է դնում սիրանուշագիտությանը, որը հայ թատերագիտության խոշոր բացերից մեկն է։

Մենագրության հեղինակը նկարագրելով Մերոպե Գանթարճյանի, հետագայում Սիրանույշի կյանքը և գործը, ընտրում է այնպիսի մանրամասներ, որոնք բնորոշ են եղել մեծանուն դերասանուհուն։ Բավականաչափ հետաքրքրական է այն փաստը, որ Սիրանույշը

թատրոնով հափշտակվել է շատ վաղ հասակից, նույնիսկ մինչև դպրոց հաճախելը։ Այս հանգամանքը, չնայած օրինաչափական չէ, բայց կարծես թե հատկանշական է մեծ արվեստագետի համար, հատկանշական թեկուզ այն պատճառով, որ եթե չլիներ այդ անհունսերը դեպի բեմը, հազիվ թե հնարավոր լինել ճեղքել թատրոնի և հատկապես դերասանուհու նկատմամբ զոյություն ունեցող նահապետական միջավայրի նախապաշարումների այն հաստ շերտը, որով շրջապատված է եղել Սիրանույշը։

Ռ. Զարյանը Սիրանույշին չի կտրել իր միջավայրից. Գրքում բավականաչափ տեղ է հատկացված Սիրանույշի բեմական ուղու պատմությանը, որ հեղինակը նկարագրում է ժամանակի հասարակական-քաղաքական, ընտանեկան, ստեղծագործական միջավայրի ֆոնի վրա։ Այս իսկ պատճառով ընթերցողը շատ լավ պատկերացնում է այն էվոլյուցիան, որ ապրել է Սիրանույշը սկսած ընտանեկան ներկայացումներից մինչև Սաղաքյանի և Վարդովյանի թատրոնը և այնուհետև մինչև մեծ արվեստագիտուհու հռչակը։

Մենագրությունը ավելի շահած կլիներ, եթե հեղինակը որոշ չափով կրճատեր մեջբերումները։ Չնայած հեղինակը մեջբերումներին դիմել է դիտավորյալ կերպով «Սիրանույշի ժամանակակիցներին ձայն տալու» համար, այդուհանդերձ մենք կարծում ենք, որ որոշ մեջբերումների վերապատմումը ավելի լավ տպավորություն կստեղծեր ընթերցողների մոտ, մանավանդ, երբ հեղինակը նկարագրելու նախանձելի կարողություն ունի։

Սիրանույշի արվեստը հասել է այնպիսի բարձրության, որ իրավունք է տալիս մեծ արվեստագիտուհուն դասելու համաշխարհային մեծությունների շարքը։ Նրա անզուգական խաղը, տաղանդի հզոր փայլատակումները տասնյակ տարիներ հափշտակել են հանդիսատեսներին, ալեկոծել նրանց սիրտը։ Այսօր, երբ լրանում է Սիրանույշի ծննդյան 100-ամյակը, և երբ նրա ստեղծագործությունը ներկա սերնդի համար դարձել է անցյալի մի գեղեցիկ հուշ, Ռ. Զարյանի «Սիրանույշ» արժեքավոր մենագրության լույս ընծայումը միանգամայն ժամանակին է։

Տ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ.